



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

N \_\_\_\_\_

\_\_\_\_\_ 2012 թ.

<Ստալկեր> ՍՊԸ տնօրեն  
պարոն Գ.Մկրտչյանին  
հասցե՝ ք.Երևան, Արուսյան 31

Կից ուղարկվում է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 24.03.2012թ. թիվ 10/2 որոշումը:

Առդիր՝ 3 թերթ:

Հարկային մարմնի գանգատարկման  
հանձնաժողովի նախագահ՝

Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 10/2

24 մարտի 2012թ.

Քննարկման ընթացքում նշվեց, որ «ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 06.03.2012թ-ի նիստում քննության է առնվել «Ստալկեր» ՍՊԸ 17.02.2012թ-ի առարկությունները և 02.03.2012թ-ի գանգատը «ԿԱ ՊԵԿ 14.02.2012թ. չափագրման արդյունքների վերաբերյալ թիվ 1205905 արձանագրության, ինչպես նաև չափագրման իրականացման շրջանակներում 13.02.2012թ-ին կազմված երկու արձանագրությունների դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերոգրյալ արձանագրությունները թողնվել են անփոփոխ:

Համաձայն «ԿԱ ՊԵԿ նախագահի 06.02.2012թ. թիվ 1205905 հանձնարարագրի 09.02.2012թ-ից մինչև 13.02.2012թ-ը «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի թիվ 4 հավելվածով սահմանված կարգով իրականացվել է չափագրում: Արդյունքում 14.02.2012թ-ին կազմվել է չափագրման արդյունքների վերաբերյալ թիվ 1205905 արձանագրությունը (այսուհետ նաև չափագրման արձանագրություն): Չափագրման իրականացման շրջանակներում 13.02.2012թ-ին կազմվել են նաև երկու արձանագրություններ, որոնցում արտացոլված տեղեկությունները «Ստալկեր» ՍՊԸ (այսուհետ նաև ընկերության) կողմից գանգատարկվում են:

Առաջին արձանագրությունում մասնավորապես նշված է.

«Ստալկեր» ՍՊԸ-ին պատկանող ք.Երևան, Գրիբոյեդովի 60 հասցեում գրծող առևտրի իրականացված վայրում 13.02.2012թ-ին ժամը 11:38-ի սահմաններում տարածք ներս մտավ երիտասարդ քաղաքացուհի, որը վաճառող Տատյանային ներկայացրեց գնվող ապրանքների ցուցակ: Որից հետո համակարգչով կատարվեց առկա ապրանքների համեմատություն, ինչ-որ գրանցումներ և ապրանքի գնի հաշվարկ: Դրանից հետո քաղաքացուհու կողմից վճարվեց 27600 դրամ: Գումարը վաճառողը ստացավ, գրանցեց ՀԴՄ-ով և տրամադրեց ՀԴՄ կտրոն՝ առանց տրամադրելու համապատասխան ապրանքները: ՕՀՎ աշխատակիցների բանավոր հարցին, թե ինչու չի տրամադրվում մանրածախ գնված ապրանքը վաճառողը պատասխանել է, որ տվյալ ապրանքը դեռ չի ստացվել պահեստից և խանութում առկա չէ: Ապրանքը կտրամադրվի գնորդին, այն ստանալուց և ըստ համապատասխան տեսականու և քանակի ստուգվելուց հետո: Մեր ներկայությամբ ապրանքի մուտք և (կամ) ելք փաստացի տեղի չունեցավ: Սակայն, վաճառող Հասմիկ Խաչատրյանի կողմից գրանցում կատարվեց արտադրանքի, ապրանքների և դրանց գների գրանցման թիվ 2 գրքում:

Երկրորդ արձանագրությունում մասնավորապես նշված է, որ չափագրման ընթացքում՝ ժամը 15:05-ի սահմաններում, ներս մտան երեք քաղաքացիներ, պատվիրեցին ըստ ցուցակի ապրանքներ, ապա ընկերության աշխատակիցներ՝ մենեջերը և պահեստապետը, արկղերով և տոպրակներով ներս բերեցին պատվիրված ապրանքները, որից հետո ապրանքների գումարները գանձելուց հետո հանձնվեցին քաղաքացիներին: Տվյալ պահին վերոհիշյալ ապրանքների շարժի վերաբերյալ ընդունում-հանձնում չկատարվեց:

«Ստալկեր» ՍՊԸ առարկություններում և գանգատում մասնավորապես նշված է.

«ԿԱ ՊԵԿ նախագահի 06.02.2012թ-ի 1205905 հանձնարարագրի հիման վրա «Ստալկեր» ՍՊԸ-ում իրականացվել է արտադրանքի արտադրության, օգտակար հանածոների արդյունահանման և իրացման, ապրանքների շրջանառության եվ ծառայությունների մատուցման ծավալների, ինչպես նաեվ իրացման փաստացի գների (սակագների) (այդ թվում՝ միջին) չափագրման ուսումնասիրություն:

Չափագրման արդյունքում 14.02.2012թ-ին կազմվել է չափագրման արդյունքների վերաբերյալ թիվ 1205905 արձանագրությունը: Արձանագրությանը կցվել են չափագրման

իրականացման շրջանակներում 13.02.2012թ-ին կազմված թվով երկու արձանագրությունները, որոնցում տեղ են գտել իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ: Մասնավորապես՝ առաջին արձանագրության մեջ նշվել է, թե իբր <Ստալկեր> ՍՊԸ-ին պատկանող ք.Երևան, Գրիբոյեդովի 60 հասցեում գտնվող առևտրի իրականացված վայրում 1138--ի սահմաններում քաղաքացին կատարել է վճարում, ստացել է <ԴՄ կտրոն, սակայն ապրանք չի ստացել: Մինչդեռ քաղաքացին վճարում կատարելուց հետո ստացել է գնված ապրանքը, ինչի վերաբերյալ տվել է հայտարարություն, որը կից ներկայացվում է:

Երկրորդ արձանագրության մեջ նշվել է, թե իբր <Ստալկեր> ՍՊԸ-ին պատկանող ք.Երևան, Գրիբոյեդովի 60 հասցեում գտնվող առևտրի իրականացված վայրում 15<sup>00</sup>-ի սահմաններում Երեք քաղաքացիների կողմից գնված ապրանքների շարժի վերաբերյալ ընդունում-հանձնում չի կատարվել: Մինչդեռ նշված գնումների վերաբերյալ տրամադրվել է <ԴՄ կտրոն, գրանցում է կատարվել համապատասխան գրանցման գրքում:

Բացի այդ, անհրաժեշտ ենք համարում նշել, որ մանրածախ առևտրի խանութում առկա են եղել և առկա են << օրենսդրությամբ պահանջվող ցուցանակներ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով <<Հարկային ծառայության մասին> << օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի, <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> << օրենքի 37-րդ հոդվածի դրույթներով, ընկերությունը խնդրում է վերացնել արձանագրությունը և չափագրումը կատարած պաշտոնատար անձանց ենթարկել պատասխանատվության:

<< ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով չափագրումն իրականացրած պաշտոնատար անձանց և ընկերության ներկայացուցչի բերված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Առաջին արձանագրության վերաբերյալ չափագրումն իրականացրած պաշտոնատար անձինք նշվեցին, որ <Ստալկեր> ՍՊԸ-ին պատկանող ք.Երևան, Գրիբոյեդովի 60 հասցեում գրծող առևտրի իրականացման վայրում 13.02.2012թ-ին ժամը 11:38-ի սահմաններում տարածք է ներս մտել քաղաքացի և վաճառողին ներկայացրել է գնվող ապրանքների ցուցակ: Որից հետո համակարգչով կատարվել է առկա ապրանքների համեմատություն, ինչ-որ գրանցումներ և ապրանքի գնի հաշվարկ: Որից հետո քաղաքացին վճարել է 27600 դրամ, որի դիմաց տրամադրվել է <ԴՄ կտրոն՝ առանց համապատասխան ապրանքները տրամադրելու: Չափագրումն իրականացնող պաշտոնատար անձանց բանավոր հարցին, թե ինչու <ԴՄ կտրոնի հետ չի տրամադրվում մանրածախ գնված ապրանքը, վաճառողը պատասխանել է, որ տվյալ ապրանքը դեռ չի ստացվել պահեստից և խանութում առկա չէ:

Հարկ է նշել, որ վերը հիշատակված քաղաքացին (գնորդը) հանդիսացել է Հասմիկ Գևորգյանը, որը 13.02.2012թ-ին ընկերության առևտրի իրականացման վայրում կատարած գնման վերաբերյալ 20.02.2012 թ-ին տվել է գրավոր հայտարարություն: Ըստ Հասմիկ Գևորգյանի հայտարարության, 2012 թվականի փետրվարի 13-ին ք.Երևան, Գրիբոյեդովի 60 հասցեում 1-ին հարկում գտնվող կոսմետիկայի խանութ-սրահից իր կողմից գնվել է 27600 դրամի ապրանք, վճարվել է գումարը, ստացվել է <ԴՄ կտրոնը և մի քանի ռուպե անց ստացվել է նաև փաթեթավորված ապրանքը՝ 2-րդ հարկում գտնվող սպասասենյակում:

Վերոգրյալից հետևում է, որ ապրանքների ձեռք բերման համար գումարը վճարվել է և դրա դիմաց <ԴՄ կտրոնը տրամադրվել է ընկերության 1-ին հարկում գտնվող կոսմետիկայի խանութ-սրահում, սակայն փաստացի ապրանքը գնորդին տրամադրվել է 2-րդ հարկում գտնվող սպասասենյակում:

Ընկերության ներկայացուցչին Հանձնաժողովի անդամների ուղղված հարցին, թե վերոգրյալ փաստի վերաբերյալ կարող է ներկայացվել առարկություն, ներկայացուցիչը պատասխանեց, որ իր դիրքորոշումն արտացոլված է Հասմիկ Գևորգյանի հայտարարությունում և ավելացնելու որևէ նոր բան չունի:

Ինչ վերաբերում է երկրորդ արձանագրությանը, ապա չափագրումն իրականացրած պաշտոնատար անձինք պնդեցին, որ չափագրման ընթացքում՝ ժամը 15:05-ի սահմաններում, ներս են մտել երեք քաղաքացիներ, ըստ ցուցակի պատվիրել են ապրանքներ, ապա ընկերության մենեջերը և պահեստապետը պահեստից արկղերով և տոպրակներով բերել են պատվիրված ապրանքները: Ապրանքների գումարը գանձելուց հետո դրանք հանձնվել են քաղաքացիներին, սակայն տվյալ պահին պահեստից առևտրի իրականացման վայր տեղափոխված ապրանքների շարժի վերաբերյալ որևէ ընդունում-հանձնում չի կատարվել:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի «Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին» N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, Հանձնաժողովի որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ: Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է հետևյալ եզրակացությունը.

«Ստալկեր» ՍՊԸ կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի իրականացրած չափագրումների արդյունքների մասին թիվ 1205905 արձանագրության վերաբերյալ ներկայացված դիմում-գանգատը մասամբ համարել հիմնավոր և առաջարկել հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովին՝ «Ստալկեր» ՍՊԸ-ում իրականացված չափագրումների արդյունքների վերաբերյալ թիվ 1205905 արձանագրությունից առանձնացնել և չեղյալ համարել հարկային տեսուչների կողմից կազմված այլ արձանագրությունները՝ հաշվի առնելով այն, որ դրանցով արձանագրված իրողությունները չափագրման շրջանակից դուրս են:

Հանձնաժողովը, կրկին անգամ ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները, ինչպես նաև հաշվի առնելով վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհրդի եզրակացությունը, գտնում է, որ «Ստալկեր» ՍՊԸ-ում չափագրման իրականացման շրջանակներում 13.02.2012թ-ին կազմված արձանագրությունները ենթակա են չեղյալ համարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. ՀՀ ԿԱ ՊԵԿ 14.02.2012թ. չափագրման արդյունքների վերաբերյալ թիվ 1205905 արձանագրությունը թողնել անփոփոխ:

2. Չեղյալ համարել «Ստալկեր» ՍՊԸ-ում չափագրման իրականացման շրջանակներում 13.02.2012թ-ին կազմված արձանագրությունները:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ